



Յ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Ց

Գ Լ Բ Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

(Տես յէջ 5)

**Մ**եր լեզուին ընդհանուր կազմութիւնը քիչ շատ գիտողաց՝ զարմանալի և անյարմար բառ մի կ'երբեւի այս, իր նշանակածին համար. թէ և բարոյապէս՝ ո՞ր լեզու ո՞ր բառ կըրնայ յարմարիլ Այնոր, որուն ամենէն մաս տեսողն այլ՝ (Մոյսէս) չկարցաւ բան մի պատշաճեցընել, և իրեն հարցուց ու լսեց, էս եւ Ռր էն : Մեր լեզուի անյարմար ըսածս այս է, որ բառին վերջաւորութիւնն ած, սոյժրաբար ոչ ներգործող այլ ներգործեալ ինչ նշանակէ ինչպէս շուռած, շինուած, հաստուած, ևն. թէ և կան բառք՝ որ աւելի իսկական նշանակութիւն ունին քան ածանցեալն, կամ թէ՛ ներգործական թէ՛ կրատական, ինչպէս կազմած, ազդուած, և այլն : Քերականական կազմութեան պէս նշանաւոր է և սեփականութիւն անուանն՝ յազգիս. մինչ Սերմական ազգեր իրարու նման ձայնիւ էլ, Ելոնիմ, Ալլահ, և այլն, կոչեն. Հընդիկը, Արիք, Լատինը, Յոյնը, Տեպա, Տեռա, Թեռա, Չեռա. Պարսիկը՝ Խիտա, որոյ նման և Քերմանը և մերձաւորք Գոտ կամ Կոդ (Gott, God), Կոտ. Սկիւթը, Սլաւեանը Պոկ, յորմէ թո՛ի Պարթեւականն Բագին, և այլն. Հայք ոչ այսպիսի անուամբք կաշած են զՌր էն, և ոչ օտարք մերոց անուամբ, զո՞նք մերձաբնակք և մերձածամանակք : Ըստ այսմ՝ շատ

հետաքրքրական է ստուգաբանութիւն Աստուած անուան. զոր և կերպ կերպ ջանացեր են մեկնել մերայինք և օտարք : Ոմանք պարզապէս համարած են, թէ ոչ այդպէս հնչելու է գամունն՝ այլ Ազդուած, որ յայտնի նշանակութիւն ունի, և շատ վայելուչ և յարմար է Կրօնից իմաստին. և կան անձինք որ այսպէս այլ արտաբերեն զձայնն : Արդարեւ շատ իմաստասիրական և ընտիր զիւս, եթէ ստոյգ ըլլար, կամ ած մասնիկն այլ չըլլար, նա և ոչ ոչ մասնիկն. զի Ազդ և Ազդոս աւելի հզօր կամ ներգործող կ'իմացուին՝ քան Ազդուածն :

Աւելի սոյժրաբար ստուգաբաններն մերոնք, իրբեւ մեր ճշմարիտ հաւատոց հաստատող Լուսաւորէն առած, (Ազգաթանգելոսի կամ անոր թարգմանին զընութեամբ), թէ նշանակէ Աստածող կամ Ստեղծող արարածոց : — Ստուգիւ Աստուած այսպէս է, բայց այս մտօք զինքն անուանելն և երբն անստոյգ. ըստ յետոյս՝ պարզմտաբար ըսեր են, թէ Ազամ այսպէս անուանեց և այսպէս աւանդեց. բայց այսպիսի կարծիք՝ Ազամայ խօսած լեզուին կարծեաց մօտեանն. որոյ յարմարի անկարծելի (ծիծաղելի) մէկի մի վկայութիւնն, որ է Օձն. որ « ասաց » Եւայի, թէ՛ զի՞ է զի ասաց Արարիչն՝ որ Աստ կած զձեզ. և զԱստ կածն՝ Աստուած

» արարին » : Այսպէս աւանդի հարց ու պատասխան գիտեցեաց մէջ՝ գրուած յամի 1866 : — Այս մտքը գրած են և մեր միջին դարուց բաւական ընտիր հեղինակք. ինչպէս Գր. Սկեւոսցի . « Ըստ որում՝ յ'աստիս ածուան (կոչի) » Աստուած . և ի տիրելոյ ամենայնի՝ Տէր » : Բարսից Մշակերորցին այլ « Աստուած աւանդն » ստեղծագործութեան և էացուցանե . « լոյ է անուն » : Ուրիշ մեկնարան մ'այլ . « Աստուածն՝ տեսող ոչ ցուցանե՝ այլ յ'աստ » ածող » : Սա այս խօսքով յայտնէ որ չ'ընդունիր միւս կարծիք մի, ինչպէս Հին Բառագրոց՝ որ կ'ըսէ . « Աստուած ի տեսումն ածող, » կամ Էբրանց լուսոյ » ? — Առաջին իմաստին մօտ՝ ոմանք այլ համարին, թէ ոչ աստ ածող, այլ Հաստող է և հաստուած . ինչպէս ծանօթ բանասէրն Էմիլի գրէր, ի Հաստուած բառէ, իբր հաստատութիւն անփոփոխ, (ի ծանօթութիւնս ոռւս թարգմանութեան Վարդանայ պատմի) : Սա գրած էր, թէ Մոսկէս Աստուծոյ ըսածէն « հակացեալ՝ հատուց զի » Աստուած է նա, որով է է, զի աստ ածող » է . և այլն : — Օտար հայագիտաց մէկն այլ (Փոանկն Ville-fort) իր քառալեզուեան բառագրոց մէջ՝ կերպով մի Աստուածն և Ազգուածն զուգելով՝ բացատրէ լատինարէն, Efficaciter producens. — Տարբեր ստուգարանութիւն մի գտուի Ս . Եւստաթէոսի վկայարանութեան թարգմանութեան մէջ (ի հարկէ ըստ թարգմանչին մտաց) . « Աստուած՝ Աշծումն (Օծում) » թարգմանի, ըստ ընկարձակութեան լեզուին » Գամրաց » , այսինքն՝ Կապպարովկացոց լեզուաւ էն՝ Աստուած կոչուէր և օծումն նշանակէր . բայց ուրիշ հին օրինակք (ԺԲ դարուց) վկայաբանութեանն՝ ոչ Աշծումն գրեն այլ Աշծումն, և իտաքն այլ ոչ առ Աստուած ուղղեն՝ այլ առ Եսոս :

Թողով այս մեր լեզուական ստուգարանութեան շնորքը, անցնինք քիչ մ'այլ առ օտարս, փնտթելու նման անուն մի : Հայագէտ կամ արեւելագէտ փոանկը ոմանք, ինչպէս քիչ տարիներ առաջ ծանօթ Լազարեանց առաջնորդն Հ. Պօռէ (Eugène Boré), մեծ գիտնականն Սասի (Sacy) և Տիւպէս Dubeux, գիտնալով Հայոց և Պարսից թէ՛ լեզուի և թէ՛ կրօնից մերձաւորութիւնն (երբեմն), համարեցան թէ՛

Աստուած բառն է կրկնութիւն Էզրտ աստուածանիշ բառի և զոհից, որ Յագր փոխուած է առ մեզ<sup>1</sup>, իբրու Էզրտան-եզրտ կամ Աստուատ : — Բաւական յարմարութիւն . բայց մեզի հնագոյն կ'երեւի մեր Աստուած անունն, քան Պարսից և Զրադեշտի քէշն : Այս ցանկի աղանդոյ վեհից մէջ՝ յիշուի Աստովտոս, որոս անուն մահուան հրեշտակին, և թարգմանուի սովորները բաժնող : Իսկ իրենց յիշածն Գուատադա՝ ասնօրիտ լեզուի մէջ է Սուատադա, ձայնիւ և իմաստիւ աւելի մերձաւոր Աստուած անուն, և ինքնատուր նշանակելով՝ չէ հետի Որ էն կոչմանէ : — Մորազման հընասէր գերմանացին, ծանօթ բանասիրաց մերոց Կ. Պօլսի, ոչ շատ տարի առաջ՝ Փոլսկոյ (ի Փորթ Ասիա) մէջ գտուած հին արձանագիրներ շահաւով մեկնել, գրած է թէ անոնց մէջ գտեր կարգացեր է Աստուատ կամ Աստուած՝ մեր հայ անունն նշանակութեամբ : Երողոտսի օրերէն ի վեր ըսուած է և շատ նշաններով այլ հաւանելի եղած՝ Փոլսկոց և Հայոց մերձագուծիւնն, և մէկին ի միւսէն գաղտնալին . սակայն Մորազմանի ընկերցուածքն շատ տարակուսական են, ինչպէս և իր բեւեռագիր ընթերցմունքն : — Անցեալ դարու սկիզբները հռչակուած Հղանտացի հայագէտն՝ Լաիլոզ (Lacroze) Մարաց Աստիագէս (Աշտիպոց, բառ մեզ Աժդահակ) թագաւորին անունն՝ նոյն համարէր ընդ Աստուած Հայոց անունն, և թէ հին ատեն ծ տառն Յունաց ղ զրոյ հնչումն ունէր, զոր և շատ փաստերով ցուցեր եմ, կ'ըսէ, իմ Հայ բառագրոց յառաջարանի մէջ . — մենք չեմք տեսած այս բաղդիբը : — Գուցէ ասոնցմէ աւելի յարնչութիւն ունենայ մեր Աստուած անունն՝ հնդկայինն Աստուատրա, որ գերագոյն բան մի նշանակէ, աստուածային ծառ մի գլխիւլայր, արմատս յերկինս, յորմէ բրդի կենդանութիւն, որ և ինքն իսկ փրանմա է, և այլ շատ բան, շատ այլ առասպել : Բայց եթէ հարկհամարութի մեր աստուածական անունն օտարի հետ զուգել, սա և միւս հնդկի Սուատադ անուննք՝ ընտրելագոյն կ'երեւին . զոր և թողումք ի քննութիւն կամ ի հերքումն գիտ

<sup>1</sup> Բատուկ անուն այլ եղած, ինչպէս Յագր Սիւնի նահատակեալ յաւուրս Վարդանանց :

նոց. նոյնպէս և զ՝ Առդպատ, որ ի զանդիկ գիրս էական նշանակէ, և աստուածալայել է:

Իրբև յակնարկ մի ասոնց յիշենք և զուցէ պատահական նմանութիւն Տոնծ Duez բառի (եթէ այսպէս հնչուի) հին Կելտաց, որ նմանապէս Աստուած նշանակէր: Բառիս առջի մասն սին պահասն՝ Աս՝ խնդրողք կրնան Եւրոպոյ աւելի հիւսիսական ազգաց երթալ, Սկանիանու ևնանց, որոց մէջ այլ փորրիկ ձայնն աստուածեղէն բարեր կամ անձեր նշանակէ, ինչպէս և Ասիերոս ու Արտարգ անուանքն այլ՝ աստուածոց բնակարան, ըստ մեզ զիցական՝ այս անուամբ քաղաքն Ազախո ձուլուն հիւսիսակողմն էր: Իրենց լեզուսք Աս կամ Անց՝ սին հաստատութեան նշանակէր. այնպէս կոչէին նա և իրենց քահանայական և զինուորական գասուց զխաւորները: — Ասոնց մերձաւոր Լաբոնաց գերազոյն աստուածն այլ Աջի՝ Atzhi կոչուէր, ինչպէս Հունդարացն՝ Իսչէն: — Եթէ քիչ մ'այլ, մանաւանդ թէ շատ այլ՝ հեռանամք կամ թափառիմք երկրիս երկու ծայրերը, Օս աստուածային անունը յանմք հին Ելիպատացոց Ղփախ սերնոց մէջ. Արշաւ՝ Պոլինեղիոյ ուլկիանապատ կղզեաց բարբարոսաց բերանում: — Բայց հերթք համարուի մեր այջան գեղերանքն. իսկ հետեւեանքն կամ ընտրութիւնն՝ հանութեան բնութեցոցաց. մեր հաւանութիւնն յայանելով յայսմ, որ մեր ազգին նման հին է իր գերազոյն ճանչցած Էին Աստուած անունն. և երկրորդ, որ օտարաց մէջ այլ լուսին մերձաւոր ձայներ, որք թերեւս աւելի այսոր յարինչ են՝ քան Տէուս կամ Չէուս անուանայ:

Իրբև պատմական, միանգամայն և մասամբ իսկական աւանդութիւն մ'այլ չմտնանք. նորերս արեւելասէր գիտնականաց մտադրութեան մեծ կէտ մ'այլ եղած է Վանայ ծովուն ոլորտն և բոլորտն, մանաւանդ իր հարուստ բեւեռածեւ արձանագրութեանց և զետնի տակէն ելած մեհենական անօթոց, զինոց և կահից համար. ծովուն արեւելեան հարաւային կողմէն շատ հեռու չէ Հայկայ — բերդ անուանեալ կիսաւերն, և զեռ բնակեալ Աստուածաշէն զիւղն: Այլ կողմերու իրաց աւանդապահ պէտք էր ըլլալ հիմայ Ալլթամարայ ծովուն զօհարն՝ կղզին և ավտուն. արդ այսօր դիւանաց կամ մայր կոն-

դակի մէջ գրուած է ի հնուց. Թէ « Ազդեցու » քեւամբն Աստուծոյ շինեցին (Հայկեանք) » զմեծ բլուրն՝ անառիկ բերդ ի յահէ Թշնա... » մեաց. . Էւ յետ նորա (Հայկին) ի զար... » միցն՝ մնացին ի բերդն Աստուածաշէնայ » : Երկու անգամ յիշուած բերդն այլ նոյնն է, հիմայ յանուն Հայկայ կոչուածն, որով՝ նա և իւրքն անուանեցին զբերդն՝ Աստուածաշէն: Այս տեղ մեր խնդիրն ոչ այս աւանդութեան պատմական ստուգութեան վրայ է, ոչ Հայկայ և իր հնութեան. ով և որ ատեն այլ ըլլայ, Աստուածաշէն անունն իր շատ հնութեան նշան է. քրիստոնէական դարուց մէջ այդպիսի անուն չէր կրնար գրուիլ. և Աստուած անուան՝ հընազոյն մնացեալ յիշատակարան է:

Յետ ճանչնալու հին Հայոց կրօնից (որպէս և նորոյս) առաջին անունը, առաւել եւս փափազելի էր ճանչնալ զինքն. այսինքն, այն գաղափար կամ պատկերն՝ զոր ունէին հին Հայք իրենց Աստուած կոչած գերազոյն էակին: — Այս կարեւոր խնդրոյս վրայօք՝ չեմք կրնար բան մի բռել, որովհետեւ ամենեւին հեթանոսական հայ գրուած կամ յիշատակ չէ ճանչցուած մեզ. բայց եթէ վերոյիշեալ Հայկայ և շէնքին աւանդութիւնէն զուսկիմք, արիական կամ արիական, այսինքն պատեւազմի և քաջութեան գաղափար տայ Աստուածն. որովհետեւ կ'աւելցընէ կոնդակն՝ թէ յերկնից՝ երազով կու ցուցընէր Հայկայ Աղեղ ու Նետ, զոր և շինէր Հայկին և անով հայածէր զԹշնամին է. զարձեալ, Աստուծոյ ազդեցութեամբն շինէ և սևառիկ քերթը. և արժանալայել եւրախտագիտութեամբ կամ պարտականութեամբ՝ յանուն նորին Աստուծոյ կոչէ իր ձեռակերտը:

Քաբէլոնի և Նիւուէի քանդակաց մէջ շատ պտուի իրենց Աստուր շատուածոյ պատկերն՝ նոյն և նման կերպարանով. բայց մէկ աննման քանդակ մ'այլ գտուած է, կտորած կոթողի մի վրայ (հիմայ ի Բրիտանեան մուսէնի), որ կերպարանէ այնպիսի Աստուած կամ երկնաւոր, ի կիսաբոլոր մի, Աղեղնի ձեռին. (տես յէջ 52). — միթէ յարեւ յարմար չէ՞ այս Հայկայ տեսլեանն:

1 Այս աւանդութեանց վրայ կրնամք ուրիշ բան այլ աւելցընել, երբ առանձինն Հայկայ վրայ խօսիմք:

Ազգին գերագոյն էակին ծանօթութիւնն՝ գրեթէ անմիջապէս պահանջէ և Արարչազոր-ծուծեան գաղափարը. որոյ վրայ այլ բնաւ հին կամ հեթանոսական յիշատակ չունիմք. և նո-բահնար առասպել համարիմք վերջին գարեբու մէջ Աննիոսեան Բերտոսի գրոյցն. զոր իբրեւ պարզ զիպուած մի յիշենք : Աննիոս կամ Նանի Ճիաննի՝ վիտերբիացի Դոմինիկեան հետա-քնին բանասէր կրօնաւոր մ'էր ի ժեղ պարու, որ աստեւ Միաբանող անուանեալ հայազգի Դոմի-նիկեան կրօնաւորը այլ կային ի Նախնական գաւառի, ուսկից շատ անգամ զային ի Հռովմ և ուրիշ իտալական քաղաքներ : Աննիոս ի Ճենովա Դոմինիկեանց մեծաւոր էր՝ երբ եկան իր վանքը երկու Հայ միաբանք, որոց գլխաւորն էր Հ. Մատաթիա. ասոնցմէ առած կ'ըսէ շատ մի հին կորուսեալ և փափագելի պատմաց հատուկաբար գրուածներ, որոցմէ էր և կրու-սեալ Բերտոսի մի պատմութիւն. յորում կ'ըսուէր, թէ հին Հայկազունք իրենց գերա-

զա, և ծնաւ զԴիոբրիոս. Յոյնք կ'առասպել-լէին՝ որ սա իր մօրը հետ կուռի ելերէ (մայրն էր Երկիր), անոր համար փոխարկուեր է ի քա-րածայո : — Այս և այսոր նման իրաց համար՝ շատ հեղ պիտի ստիպուիմք մեր պատմահօր խորենացոյ հետ բացագանչել. « Արդարեւ առասպել՝ և առասպելաց առասպել » :

Համեմատ վերոյիշեալ Աստուածայինի և Հայկայ երազին աւանդութեան՝ մեր բարեմիտ պատմիչք համարին, թէ Հայկինստոյգ աստուա-ծապաշտ էր, և գրեթէ կրօնական եռանդեամբ հակառակեցաւ Բեւայ. « Ոչ միայն զի (զու) » չես աստուած, այլ շուն զու և երամակ շանց » որ զկնի քո տողեալ սահին », ըսած ըլլայ առ Բեւ, ըստ թովմ. Արծրունոյ : Վարդան աւելի վատահութեամբ կ'ըսէ ի Պատմագրութեանն, թէ Հայկն « ոչ պաշտեաց զնա աստուած » : Իսկ իր լուսաւորչի ներքողին մէջ՝ այլ աւելի համարակ կ'ըսէ, թէ Աստուած հրամայած ըլլայ Հայկայ՝ հակառակել կուսպաշտութեան, որ և « ոչ պաշտեաց ընդ եթմանասուն և մի » նահապետս երկրի՝ զպատկերն Բեւայ, այլ » իրախուսեալ յԱստուած սատակեաց զնոյն » ինչքն զկենդանին զառաջնորդն պատկերա- » պաշտութեան » , և այլն : — Եթէ արդարեւ Հայկին Յաբեթի թոռան թոռն էր՝ հաւա-նական էր իր աստուածպաշտութիւնն, ինչ-



զոյն Աստուած ճանաչէին զՆոյ՝ որ և Երկիրնք, և իրեն կին զԵրկիր՝ Արեւտիա անուամբ (միթէ Արարած), որ յԵրկնից սերմնառեալ՝ ծնանի կամ զոյստորէ զամենայն տրարածո : Աննիոսի բոլոր պատմական հին գրուածոց հետ՝ այս և այսպիսիք այլ՝ ժամանակ մի հաւատալի և ընդ-ունելի եղած էին շատոնց, հիմայ՝ չեն բնաւ աւելորդ է և մեզ քննել կամ քննողաց կար-ծիքը յիշել, թէ ո՞վ է հնարած զանոնք, կամ ո՞րչափ մեղադրելի և անմեղադրելի է Աննիոս, խարո՞ղ թէ խաբուած : — Բայց եթէ այս ա-րարչագործութեան յիշատակն կրնայ ունենալ ծագում ուրիշ ծանօթ աւանդութիւնէ, պէտք է յիշեմք, որ մեր նախայիշեալ և համացեղ ը-սուած փոխգաղտնց մէջ այլ կար ոչ շատ աննը-ման աւանդութիւն մի. իբր թէ ի սկզբան կար Աղտն, \*Αγθον, անկերպարան նիւթ մի, քարի ապաւածի նման, որ լայնասարած ցամաք մի ձեւացընէր. Միհր կամ Արեգակն բեղմնաւորեց

պէս հաւանական և ստող այլ է՝ որ ինչուան քանի մի ցեղ նահապետաց սերունդ և ինչուան Արարահմու աստեւ, տեղ տեղ ուղիղ աստուած-պաշտութիւն կար, և վկայեն Ս. Գիրք : Հայա-ստան՝ եթէ թատր և եթէ մօտ թատր՝ ուր Ս. Գրոց առաջին պատմած զէպըն գործեցան՝ յետ և առաջ ջրհեղեղի, Նոյի ո՞ր որպոյ սերունդին այլ միճակուած ըլլայ, անոր նահապետական հաւատքն պահած է անտարակոյս : Բայց մինչև ե՞րբ. — զայս զժուարին կամ անկարելի է ստու-գել : Վանական վարդապետ մեր (որոյ աշակերտ էր պատմիչն Վարդան) իր երկրի (Հայ-Աղուանից) Վահրամ իշխանի մի բերնով՝ հարցընէ. « Քանի՞ » տարով յետեւ Հայք ի կուսպաշտութիւն մը- » տին », յետ ծագման կուսպաշտութեան. և պատասխանէ, « Հարիւր » : — Իսկ կուսպաշ-տութիւնն ե՞րբ մտաւ յաշխարհ. — վերեւ ի-մացուց Վարդան՝ թէ Բեւ նախ մտուց կուսպաշ-տութիւն՝ իրեն պատկերը պաշտել տալ ուզե-

լով. ոմանք այլ Սեմայ ցեղէն Աբրահամու հայրը կամ պապը համարին այսոր պատճառ : Բայց ասոնք մեզի աւելորդ խնդիրներ են. հարկ է որ հասարակաց ազգաց ամենէն դժբն. դակ ժանտախտն, ստու հաւատքն, ուչ կամ շուտ Հայոց մէջ այլ ճարտարութեամբ համարինք, և քննենք, նախ հնագոյն համարեալ ազանդ. ները, ապա յատուկ կապաշտութիւնը :

Այլ ո՞րչափ պզգայի է ողջախոհ քրիստոնէի՝

Թողլով ստոյգ աստուածաշտութեան յիշատակ. ները, դառնալ իր հնացեալ և մոռացեալ նախ. նեաց՝ շնորհց, ախտից, կրից և տգիտութեան, և ստեղծած կամ կարծած սնտոխը փնտռել : . . Սակայն գոնէ փոխանակ անոնց՝ մենք ուղղա. հաւատ բաղդատոր որդիքն՝ անգամ մ՛այլ աւելի երկրպագութիւն և զոհութիւն մատուցանեմք՝ զմեզ լուսաւորողին և փրկողին Քրիստոսի, ճշշ. մարիա Աստուծոյ :

Շարայարեչի

## ԲԱՆ 'Ի Ա. ԹԱՐԳՄԱՆԻՉՍ

(Տես յէջ 18)



**Մ**ԵՍՐՈՒՑ սկիզբն և հայր դպրութեանց հայ ազանց՝ զիւսիւն նշանազրաց, և անհամե. մատ 'ի փառս իւր : Եզնիկ յընթացս դարուց ազգիս և պատմութեան անմահ անուն ժառան. գեալ իւրովք ազգի ազգի չքնաղ գրովք : Կորին իւրով պատմութեամբն աղբիւր ծարաւ լցոսմեզ և պատմացն որ ըստ նմանէ՝ լրոյ մեծամեծար և ցանկալի անցից ժամանակին . քաւ 'ի մա. ռախոյոյ՝ որ ծածկեալ ունի զբազում բանն նո. րին՝ առ ոնոյն համառօտութեան : Խորենացի անզուգական 'ի մասին իւրոց պատմական վաս. տակոց, և միայն յարուցիչ ցանկալի յիշատա. կաց ազգի՝ յաւերակաց դարուց անցելոց մու. ռացելոց : Եղիշէ՝ մեծ վկայ մեծի պատերազ. մի՝ պատմութեամբ իւրով, մեկը շրթանց, ջերմ՝ հնոց աստուածեղէն սիրոյն և հայրենի տան, ճարտարախօս և հզօր 'ի նկարագիր : Դաւիթ՝ գրովքն Սահմանաց իմաստասիրու. թեան, թերեւ այնու զի զոյ այն և 'ի յոյն լեզու, արժանացեալ հոռոմ վարկանելոյ 'ի Յունաց անտի՝ 'ի մեծութիւն փառաց իմաստնոց հռչա. կաւորաց ազգի իւրեանց, ըսա յիշատակարանի նոյն գրոց : Ղազար՝ իւրով ճարտարահիւս և կար. զարան մատենիւն օրինակ նմանութեան : Յու. հան մանդակունի ճոտմարանութեամբն և յորպ ճառիւքն զղրգիչ որմոց հայրենեաց : Մի՝ մոռացողք և զամբաւ խօսս նոցուն զխրատու և զկանոնականս, զերգս և զազօթս եկեղեցա.

կանս՝ խորհրոց, օրհնութեանց և զպշտաման հասարակաց, և զայլ ևս բազմադիմի վաստակս : Ամենայն մատենաք նոցա մեծք և արգոյք իցեն մեզ միշտ՝ վասն յօրինիչ սուրբ մատանցն, վասն ցօղելոյ նուիրական կայլակօք արեան և քըր. տան իւրեանց, յաղագս ցանկալի և քաղցր յիշատակացն որ 'ի նոսա և ամենայն ճոխու. թեանցն :

Իսկ զԹարգմանութիւնս բազմաց՝ 'ի նոցունց՝ եթէ կշռեսցուք ընդ բնագիրսն, ժտիցիմք թերեւ ասել՝ թէ անուանեալք բնագիրք 'ի մերոց աստի հանեալ իցեն թարգմանութեամբ : Այնչափ քալ զիտացին յոմանս՝ և աւելի քան զգրիսն ինքնին, նկարել 'ի հայ բան զի. մասսո նոցին՝ առ 'ի ճարտար տեղեակ զոյոյ յամենայն 'ի նոսա : Որոց վերագոյն և քաշա. ծանօթ բանասէր աշխարհի՝ Պրոցն Սրբոց է թարգմանութիւն 'ի ձեռն ՄԵՍՐՈՒՑայ և իւ. րոցն, նորոգեալ իմաստուն և չնախարհիկ զըր. չաւ մեծին Սահակայ և Եզնիկայ՝ :

Ք. Յաւանզուն զօր թողին մեզ թարգմա. նիւքն 'ի զիրս իւրեանց, պատուական և մե. ծագոյն թերեւ քան զբնուն՝ բնիկն և անա. ղօտ մայրենին է բարբառ : Թէ չէր նոցա ա. ւանդեալ մեզ զայն, ծանր այնորիկ քան այ.

1 կոր. 10, 21. — Խոր. Ք. ԾՔ. 4Ա.